Արևիկ Անափիոսյան
ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ստրասբուրգ, հոկտեմբերի 24-26, 2018թ.

<u>Գործուղման նպատակն</u> էր Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի 10-րդ պլենար նիստի աշխատանքներին և Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության հետ համագործակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպվող «Կրթություն 2030»-ին նվիրված առաջին և երկրորդ տարածաշրջանային խմբերի երկրների խորհրդակցությանը մասնակցելու:

<u>Քննարկված թեմաները.</u>
Եվրոպական միության հետ համագործակցությամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպվող «Կրթություն 2030»-ին նվիրված առաջին և երկրորդ տարածաշրջանային խմբերի երկրների խորհրդակցության ժամանակ քննարկվել են՝

1. ներառական կրթության կարևորությունը, մասնավորապես, շեշտադրելով փախստականների և տեղահանվածների կրթության իրավունքի իրացումը,
2. ժողովրդավարական քաղաքացիական կրթության խորացումը և համապատասխանեցումը ԿԶՆ 4-ի գլոբալ քաղաքացիությանը և կայուն զարգացմանը միտված կրթության շեշտադրմանը,
3. ներքին և միջազգային ֆինանսավորման արդյունավետության և հավասարության ապահովում թիրախավորելով կարիքավոր համայնքները և երկրները,
4. կրթության որակի և հավասարության մշտադիտարկման ուժեղացում, ինչպես նաև ազգային, տարածաշրջանային և գլոբալ մշտադիտարկումների փոխկապակցվածության ապահովում:

Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի 10-րդ պլենար նիստի ժամական քննարկվել են հետևյալ թեմաները ՝

1. կարողություններ ժողովրդավարական մշակույթի համար,
2. թվային քաղաքացիական կրթություն,
3. լեզվական քաղաքականության և պրակտիկայի ապագան կրթական ծրագրերում,
4. ներառական կրթություն
5. կրթության ապահովում փախստականների, տեղահանվածների և խոցելի խմբերի համար,
6. “ETINED” ծրագրի իրականացումը,
7. ԿԶՆ 4-ի շրջանակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցություն:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

«Կրթություն 2030»-ին նվիրված նիստի ժամանակ առանձնացրել եմ ներառական կրթության ապահովման կարևորությունը բոլոր երեխաների համար, այդ թվում նաև տաղանդավոր երեխաների, ում կրթական պահանջները ևս պետք է հաշվի առնվեն քաղաքականություն մշակելիս: Առաջարկվել է նաև խթանել ՄԱԿ-ի վիճակագրության ինստիտուտի և ՀՀ վիճակագրական կոմիտեի համագործակցությունը տվյալների հավաքագրման մեթոդաբանության համապատասխանեցման նպատակով:

Նիստի ժամանակ քննարկվել է նաև ուսուցիչների առցանց վերապատրաստման հարթակի ներդնումը, որը ենթադրում է ինքնակրթության սկզբունքներ: Սրա վերաբերյալ առաջարկել եմ քննարկել այս վերապատրաստումների համար ուսուցիչներին տրամադրվող կրեդիտների հնարավորությունը, ինչպես նաև վերապատրաստման ռեսուրսների հավաստիության ապահովման և թարգմանության ժամանակ առաջացած հարցերին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Նիստի ժամանակ ընդունվել են որոշումներ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1. Վերահաստատել փախստականների, տեղահանվածների, միգրանտների և ապաստան հայցողների համար հավասար կրթական հնարավորություններ ապահովելու պարտավորությունը
2. Ապահովել բոլոր երեխաների, մասնավորապես խոցելի խմբերի համար նվազագույնը մեկ տարվա նախադպրոցական կրթություն և 12 ամյա անվճար հանրակրթական կրթություն
3. Կրթության կարևորությունը կայուն զարգացման և ժողովրդավարական քաղաքացիության ապահովման հարցում
4. Ներքին և միջազգային ֆինանսավորման բարելավում ԿԶՆ 4-ի «Կրթություն 2030»-ին հասնելու նպատակով:

Հանդիպման ժամանակ ձեռք է բերվել պայմանավորվածություն, առարկայական չափորոշիչների վերանայման շրջանակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից աջակցության տրամադրման վերաբերյալ: Մասնավորապես, քննարկվել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» ոլորտում փորձագետների տրամադրման և հնարավոր ֆինանսավորման հարցը:

Եվրոպայի Խորհրդի Կրթական քաղաքականության և պրակտիկայի ղեկավար հանձնաժողովի նիստի ժամանակ ելույթ եմ ունեցել և հաշվի առնելով, որ կրթության ոլորտին տրամադրվող ֆինանսավորումը նվազում է Եվրոպայի Խորհրդում, իմ զեկույցում կարևորել եմ այն հետազոտությունների դերը, որոնք հնարավորություն կտան վեր հանել կրթության ոլորտում, այդ թվում նաև ԵՄ ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերի երկարաժամկետ արդյունքները և ազդեցությունները: Մասնավորապես, առաջարկել եմ ուսումնասիրել «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում» ծրագրի երկարաժամկետ ազդեցությունը, ինչը կդառնա օրինակ այլ անդամ պետություններում նմանատիպ հետազոտություններ կատարելու համար: Այս հետազոտությունների ամբողջական արդյունքները կարող են ծառայել որպես հիմնավորում ԵՄ քարտուղարությանը կրթության ոլորտի ֆինանսավորման մեծացման անհրաժեշտությունը ներկայացնելիս:

Արևիկ Անապիոսյան
30.10.2018

Invalid signature

X

ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ

Signed by: ANAPIOSYAN AREVIK 6905860212